Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականություն /20դասաժամ/, իմ հայրենիք /2 դասաժամ/, հասարակագիտություն /13 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /Ձև 1/,

- մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

- անձը հաստատող փաստաթուղթ

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

- ինքնակենսագրություն /Ձև 5/,

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

- որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

- Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***2025թ. սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 16-ը*** *ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:*

Մրցույթը տեղի կունենա ***2025թ - ի սեպտեմբերի 19-ին ժամը՝ ժամը 14^{30}-ին,*** *ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջնակարգ դպրոցում: Հասցե՝ գ. Մասիս, Բ. Մարտիրոսյանի 1/1:*

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093.54-33-20) հեռախոսահամարով: